



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Այս տարի էլ Մայր Աթոռ սբ. Էջմիածնի հոգևոր ճեմարանը բոլորեց ուսումնա-դաստիարակչական բեղմնավոր մի տարի՝ տեսչության, դասախոսական կազմի կազմակերպված, նպատակասլաց աշխատանքների և ուսանողության հառաջադիմության արդյունավետ պայմաններում:

Հաջողությամբ անցան նաև 1974—1975 ուսումնական տարում կիսամյա և ամավերջի քննությունները:

Հունիսի 13-ին ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ ամավերջի հանդիսություն, ուր հանրագումարի բերվեցին ճեմարանի հարկի տակ անցած ուսումնական մեկ տարվա արդյունքները:

Ամավերջի հանդիսությանը նախագահում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հանդիսությանը ներկա են Վանական խորհրդի պատվարժան անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, ուսանողությունը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությունը ներածական խոսքով բաց է անում ճեմարանի ավագ վերակացու Սարգիս սրկ. Սարգսյանը: Հանդիսության առաջին մասում, ուսանողության ուժերով, գործադրության է դրվում խմբերգերից, երգերից, արտասանություններից, նվագից կազմված գեղարվեստական մի ծրագիր:

Բ լսարանի ուսանող Հակոբ սրկ. Գըլըճյանը, հանուն ուսանողության, ընթերցում է որդիական ջերմ զգացումներով գրված երախտագիտական մի ուղերձ՝ ուղղված Հայոց Հայրապետին, ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին:

Հանդիսության երկրորդ բաժնում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանը գրավոր բովանդակալից մի զեկուցումով ներկայացնում է ճեմարանի մեկ տարվա ուսումնա-դաստիարակչական աշխատանքների համառոտ, բայց ամբողջական պատկերը՝ կանգ առնելով ուսանողության թվի, դասարանական բաժանումների, դասախոսական կազմի, ուսանողական ներքին կյանքի և այլ մանրամասների վրա:

1974—1975 ուսումնական տարեշրջանում հոգևոր ճեմարանն ունեցել է 32 ուսանող՝ Ա լսարանի, Ա, Բ և Գ դասարանների վրա տեղաբաշխված: Հոգևոր ճեմարանն ուսումնական տարին ավարտել է 25 ուսանողներով:

Իր տարեկան զեկուցման ավարտին արժանապատիվ տեսուչ հայրը մրցանակաբաշխության է ներկայացնում 1974—1975 ուսումնական տարվա ընթացքում ուսման հառաջադիմության և վարքի ու բարքի մեջ աչքի ընկնող ուսանողների ցանկը, ըստ հետևյալի.

Ա լսարան. առաջինն է հանդիսանում Սորին Մանտալյանը, 9,12 միավորով.

Երկրորդը՝ Խաչիկ Մարտիրոսյանը, 8,56 միավորով.

Գ դասարան. առաջինն է հանդիսանում Բյուզանդ Գալայճյանը, 8,88 միավորով.

Երկրորդը՝ Գրիգոր Հաճյանը, 7,66 միավորով.

Բ դասարան. առաջինն է հանդիսանում Խաչիկ Խալապյանը, 8,22 միավորով.

Երկրորդը՝ Հրաչ Օղլուգյանը, 8,05 միավորով.

Ա դասարան. առաջինն է հանդիսանում Հովհաննես Շահնազարյանը, 8,24 միավորով.

Երկրորդը՝ Արտաշես Գրլրճյանը, 7,87 միավորով:

Գերազանց և օրինակելի վարքի համար մրցանակների են արժանանում Ա լսարանի ուսանող Սորին Մանտալյանն ու Գ դասարանի ուսանող Գրիգոր Հաճյանը:

Մայրենի լեզվի մեջ գերազանց առաջադիմության համար մրցանակի է արժանանում ամերիկահայ ազատ ունկնդիր ուսանող Վան Տեր-Մկրտչյանը:

Հայոց Հայրապետի կողմից եկեղեցական երաժշտության մեջ առաջադիմության համար Կոմիտաս վարդապետի անվան առաջին մրցանակը (150 ռուբլի) շնորհվում է Ա լսարանի ուսանող Խաչիկ Մարտիրոսյանին, երկրորդը (100 ռուբլի)՝ նույնպես Ա լսարանի ուսանող Լևոն Բաղդասարյանին:

Ուսման առաջադիմության, վարքի ու բարքի և երաժշտության մեջ մրցանակ շահող ուսանողները տ. Հուսիկ եպս. Սանթուրյանից աջահամբույրով ստանում են իրենց մրցանակները՝ ներկաների խանդավառ և քաջալերիչ ծափողջույնների ներքո:

Հոգևոր ճեմարանի 1974—1975 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունն ավարտվում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի շնորհավորության և օրհնության գեղեցիկ խոսքով և խմբովին երգված «Հայր մեր»-ով: